

4.	ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ
----	---

**ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ**

Թ. Ա. ԱՍՈՅԱՆ

*Քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ քանասիրական ֆակուլտետի դեկան*

Լեզվական մի շարք իրակություններ միակերպ չեն ընդունվում և մեկնաբանվում լեզվաբանների կողմից: Նման միավորներից է միակազմ նախադասությունը: Դրանց կառուցվածքային, բովանդակային և կիրառական յուրահատկությունները հնարավորություն են տալիս թե՛ յուրովի բնութագրման և թե՛ դասակարգման: Հայ շարահյուսագիտության մեջ միակազմ նախադասություններին անդրադարձել են բոլոր այն լեզվաբանները, որոնց հետաքրքրել է հայերենի քերականական-շարահյուսական կառուցվածքը: Հարցադրումների շրջանակը լայն է. դրանք նախադասություններ են, թե ոչ, ստորոգական-հաղորդակցական միավորներ են, թե ոչ, նախադասության գլխավոր անդամներ՝ ենթակա կամ ստորոգյալ ունեն, թե ոչ, առավելապես խոսքի ոճավորման միջոցներ են, թե հայերենին բնորոշ լեզվական միավորներ, որոնց կիրառությունը չնայած սահմանափակ է, բայց մեր լեզվի շարահյուսությանը բնորոշ իրողություն: Իսկ ինչ վերաբերում է դրանց դասակարգմանը, ապա այստեղ էլ միօրինակություն չկա. տրվում են տարբեր անուններ, կատարվում են տարբեր բաժանումներ՝ տարաբնույթ բացատրություններով հանդերձ: Պետք է ասել, որ այս պարագայում նկատելի է նաև ռուս լեզվաբանության ազդեցությունը:

Նպատակ չունենալով մանրամասնորեն անդրադառնալու նշված բոլոր հարցադրումներին՝ ներկայացնենք մի քանի տեսակետներ՝ հիմնականում նկատի ունենալով արևելահայ քերականագիտության մեջ արտահայտված մոտեցումները:

Հայ քերականագիտության մեջ անենթակա նախադասություններն անվանվել են միադիմի, անդեմ և դիմազուրկ բայերով նախադասություններ, որոնց դեմ եղել են առարկություններ: Օրինակ՝ Գ.Ավետիքյանն իր «Քերականութիւն հայկական» գրքում գրում է. «Դիմազուրկ կամ անդեմ բայ միայն աներևոյթը և ընդունելութիւնը կրնան ըսվին, ինչու որ իրենք իրենց հեջ դեմք չեն ցուցաներ» (էջ 98): Մ.Չամչյանը նշված նախադասությունները անվանում է 1.պատահական դիմազուրկ (դիմազուրկ ըստ նշանակության- Գ.Ավետիքյան) և 2.բուն դիմազուրկ (դիմազուրկ ըստ սովորության – Գ. Ավետիքյան)¹: Ա.Այտնյանը ընդունում է թե՛ անվանումները, թե՛ տեսակները, բացատրում է, որ «միայն եզակի 3-րդ դեմքը կգործածվի, որի համար էլ կկոչվի միադիմի»²: Հետագայում որոշ քերականներ (Ա.Արաբաջյան, Գր. Վանցյան և ուրիշներ) այս նախադասություններն անվանում են իբրև ենթակա չունեցող նախադասություններ:

Արևելահայերենի ուսումնասիրության ակունքներում Ստ. Պալասանյանն է՝ արևելահայերենի վերաբերյալ իր տեսական և գործնական բնույթի աշխատություններով: Մեծանուն հայագետն իր գիտական գործունեությամբ նպաստում է աշխարհաբարի տարածմանը, ուսուցման անհրաժեշտությանը: Չնայած արևելահայոց մեջ գրաբար թե աշխարհաբար բանավեճն արդեն հիմնականում մարել էր, այնուամենայնիվ դեռևս անհրաժեշտություն էր զգացվում գործնականում պաշտպանել աշխարհաբարի իրավունքները: Այս առումով հետաքրքիր է հետևյալ դիտարկումը. «Շատ հեռու չեն մեզանից այն ժամանակները, երբ հայերէն լեզուի ուսուցումը գրաբարով սկսվում ու գրաբարով ավարտուում, - գրում է նա և ապա ավելացնում, - ...լեզուի դասատուութիւնը սկսելու է անշուշտ մայրենի խօսուն բարբառով, և թէ կենդանի լեզուն պիտի համարուի միակ հաստատ հիմ, որի վրայ պիտի բարձրանայ կանոնաւոր դաստիարակութեան շէնքը»³: Աշխարհաբարով լույս տեսնող այբբենարանների, ընթերցանության գրքերի կողքին գրաբարի քերականությանը դիմելը նա համարում է անբնական ու վնասակար: Ստ. Պալասանյանը դա համարում է բավականին անհասկանալի

¹ Չամչեան Մ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Տիֆլիս, 1826:

² Այտնեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 80-81:

³ Պալասանյան Ստ., Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874, Յառաջաբան, Ա:

լեզվական իրավիճակ, ուստի փորձ է արվում որոշարկելու «հին և նոր հայերենների սահմանները դաստիարակության (ուսուցման-Թ.Ա.) մեջ»: Հաջորդիվ նա գրում է. «Սկզբնական ուսումը մայրենի խօսուն լեզուով ասանդելուց յետոյ չդիմել ուղղակի գրաբար լեզուի քերականութանը, որ միայն զգուանք է յարուցանում աշակերտների մեջ, այլ նախ կենդանի լեզուի քերականութիւնը ուսուցանել, հետո անցնել գրաբար լեզուին, որ եթէ աշխարհաբարի հետ համեմատուելով ասանդուի աշակերտներին, կթեթևանայ ու կեանքն կստանայ»¹: Իր աշխատություններում հայագետը նույնպես անդրադառնում է անենթակա նախադասություններին՝ դրանք անվանելով անդեմ կամ միադիմի և առանձնացնելով բուն անդեմ (Պետք է: Հարկ է: Հերիք է:...) և պատահական անդեմ (Անձրևեց: Փայլատակում է:): Ըստ էության Պալասանյանն ընդունում է Մ.Չամչյանի անվանումները:

Մ. Աբեղյանը փաստորեն առաջին լեզվաբանն է, որը փորձել է հնարավորինս ամբողջական ներկայացնել արևելահայ աշխարհաբարի քերականական կառուցվածքը: Նրա տեսակետները, ի տարբերություն իր նախորդների և հաջորդներից շատերի, բխում են հենց աշխարհաբարի իրակություններից և կաշկանդված չեն գրաբարով, որի հետևանքով նրա արտահայտած շատ տեսակետներ հետագայում մերժվեցին և մեծ մասամբ վերարծարծվեցին 1960-ական թվականներին նոր սերնդի լեզվաբանների կողմից: Դեռևս 20-րդ դարի սկզբին նա հրատարակեց «Աշխարհաբարի շարահյուսություն» ուսումնասիրությունը (Վաղարշապատ, 1912), որը նախատեսված էր աշակերտության համար որպես դասագիրք: Սակայն պետք է ասել, որ այն ավելին էր, քան դասագիրքը: Ավելի ուշ Վ.Առաքելյանը, անդրադառնալով այս ուսումնասիրությանը, նկատում է, որ աշխարհաբարի բոլոր իրողությունները հավասարաչափ ուսումնասիրված չեն: Այնուամենայնիվ, ակնառու է Մ.Աբեղյանի նորովի մոտեցումը հայերենի շարահյուսական իրողությունների նկատմամբ: Ներկայացնելով նախադասության անդամների (բառերի պաշտոնների) և նախադասությունների (խոսքերի) առանձնահատկությունները, կատարելով որոշակի դասակարգումներ՝ նա ասում է, որ ենթական բայի դեմքը բացահայտող լրացումն է և իբրև լրացում՝ հավասարաթեք է խնդիրներին ու պարագաներին, իսկ այնուհետև ավելացնում է, որ հաճախ բայի դեմքով միայն բավարար չափով որոշ չի լինում այն առարկան, որին

¹Պալասանյան Ստ., Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874, Յառաջաբան, Բ:

վերագրվում է բայիմաստը կամ ստորոգյալը: Հարկավոր է, որ բայի հետ դրվի մի գոյական, որով որոշվի գործողը¹: Այնուամենայնիվ, ըստ Մ.Աբեղյանի, խոսքը (=նախադասությունը) կարող է լինել և անենթակա. «Խոսքն անենթակա է կոչվում, երբ բայի դեմքը ոչ մի գոյականով չի բացահայտվում և չի կարող բացահայտվել. օրինակ՝ Լուսացավ: Մթնեց:»²: Այս կարգի նախադասություններին տրված անենթակա անվանումը հետագայում ընդունվեց մյուս լեզվաբանների կողմից: Նա նաև ավելացնում է, որ «անենթակա խոսքերը կոչվում են նաև անդեմ խոսքեր, իսկ անենթակա խոսքեր կազմող բայերը՝ անդեմ կամ դիմազուրկ կամ միադիմի բայեր», և անմիջապես էլ հավելում է, որ անդեմ և դիմազուրկ անվանումը սխալ է, որովհետև դիմազուրկ բայ չկա, իսկ միադիմի բայերը նրանք են, որոնք ունեն միայն 3-րդ դեմք: Հետագա շարադրանքում Մ.Աբեղյանը անդրադառնում է անենթակա նախադասությունների դրսևորումներին: Պետք է ասել, որ Մ.Աբեղյանի նշած բոլոր կազմություններում հանդես են գալիս դիմավոր բայեր: Միակազմ նախադասությունների մյուս տեսակների մասին խոսք չկա:

Վ. Առաքելյանը 1958թ. հրատարակում է իր «Հայերենի շարահյուսություն» երկհատոր ծավալուն ուսումնասիրությունը, որի «Առաջաբանում» նշում է, որ հայերենի շարահյուսական կառուցվածքը լիարժեք ուսումնասիրված չէ: Համեմատելով բառագիտության և ձևաբանության հետ՝ նա նկատում է, «որ շարահյուսությունը քերականության գրեթե անտես արված միակ բաժինն է»³: Լեզվաբանի դիտարկմամբ շարահյուսական ամբողջական ուսումնասիրություններ չկան ոչ գրաբարի և ոչ էլ արևմտահայերենի համար, իսկ արևելահայերենի շարահյուսությունն ուսումնասիրվել է Մ.Աբեղյանի կողմից: Սակայն այս դեպքում էլ Վ.Առաքելյանը հարցին մոտենում է որոշակի վերապահությամբ՝ ասելով, որ «Մ.Աբեղյանը համահավասար չափով չի խորացել շարահյուսական երևույթների մեջ»⁴: Ահա եղած բացերը լրացնելու և արևելահայերենի ամբողջական շարահյուսական կառուցվածքը ներկայացնելու նպատակադրմամբ էլ ձեռնարկել է իր

¹ Աբեղյան Մ., Երկեր, հտ.2, Երևան, 1974, էջ 301-302:

² Նույն տեղում, էջ 302:

³ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հտ.1, Երևան, 1958, էջ 7:

⁴ Նույն տեղում:

ուսումնասիրությունը: Եվ պետք է ասել, որ չնայած այսօր հսկայական աշխատանք է կատարվել այդ ոլորությամբ, շատ բան է ճշգրտվել և նորովի մեկնաբանվել, «Հայերենի շարահյուսությունը» մնում է որպես հայերենի շարահյուսական համակարգի համեմատաբար ամբողջական ուսումնասիրություններից մեկը: Հավելենք, որ ծավալի պատճառով բառակապակցությունը ներկայացված չէ որպես շարահյուսական իրողություն, սակայն նախադասության ուսմունքը ամբողջական է: Այս աշխատանքի առավելություններից մեկն էլ նախորդների համեմատ այն է, որ Վ.Առաքելյանը հանգամանորեն է քննում միակազմ նախադասությունները, կատարում է դասակարգում, որը շատ կողմերով ընդունելի դարձավ հետազայում:

Վ. Առաքելյանը միակազմ նախադասությունները բնորոշում է մեկ գլխավոր անդամ ունենալու հատկանիշով, ընդ որում այն կարող է արտահայտված լինել կամ բայով, կամ այլ խոսքի մասով, որոնք համապատասխանաբար կարող են կամ ենթակայի, կամ ստորոգյալի դեր խաղալ: Մեկ գլխավոր անդամ ունենալու հանգամանքը միակազմ նախադասությունների էությունն է: Համեմատելով զեղչված ենթակայով և ստորոգյալով նախադասությունների հետ՝ Վ.Առաքելյանը կատարում է հետևյալ ճիշտ դիտարկումը. «Այսպիսի նախադասության համար արհեստականորեն ենթակա կամ ստորոգյալ վերականգնելը նշանակում է....փոխել նրա էությունը, բնույթը, և լեզվական որևէ իրողություն ուսումնասիրել մի այլ իրողության փոխարեն»¹:

Միակազմ նախադասությունները Վ.Առաքելյանը բաժանում է երեք խմբի՝ բայական, անվանական և բառական (կամ բառ-նախադասություններ): Մի կողմ թողնելով երրորդ տեսակը՝ անդրադառնանք առաջին երկուսին: Բայական միակազմ նախադասությունները բաժանում է երեք տեսակի.

1.Անորոշ-դիմավոր- անենթակա այնպիսի նախադասություններն են, որոնց ստորոգյալն արտահայտվում է բայի բոլոր եղանակների և ժամանակների հոգնակի երրորդ դեմքով՝ բացի հրամայականից:

2.Ընդհանրացնող-դիմավոր-ենթակա չունեցող այնպիսի նախադասություններն են, որոնց ստորոգյալն արտահայտվում է եզակի

¹ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հտ.2, Երևան, 1958, էջ 11:

երկրորդ դեմքով և ցույց է տալիս ընդհանրացնող այնպիսի գործողություն, որ հավասարապես վերաբերում է նաև մյուս դեմքերին:

3.Անդեմ-այն նախադասություններն են, որոնց ստորոգյալները, արտահայտվելով եզակի երրորդ դեմքով, ցույց են տալիս առանց ենթակայի կատարվող գործողություն կամ դրություն (Լուսանում է: Անձրևում է:): Այս տիպի նախադասությունները լեզվաբանը բաժանում է երկու խմբի ըստ ստորոգյալի նշանակության.

1-ին խումբ-բնության երևույթներ և ժամանակային փոփոխություններ արտահայտող բայական և բաղադրյալ ստորոգյալներով,

2-րդ խումբ-տարբեր նշանակություններով ստորոգյալներով:

Քննելով գլխավոր անդամների տարբեր դրսևորումներով դեպքերը՝ Վ.Առաքելյանը սրանց շարքում է դնում նաև անորոշ դերբայով կազմվածները, ընդ որում անորոշ դերբայը կարող է հանդես գալ ինչպես ուղեկցող ձևերի և դիմավոր բայերի հետ (անհրաժեշտ է գնալ, պետք է քնել, հարկավոր է աշխատել և այլն), այնպես էլ միայնակ (Ընկնել և կորչել և ննջել հավետ...):

Անվանական նախադասությունները կազմված են մեկ գլխավոր անդամից, որը կարող է լինել գոյական կամ իբրև գոյական գործածվող խոսքի մաս և կամ որևէ բառակապակցություն, որոնք կիրառվում են ուղղական հոլովով. Ամառ: Շոգ: Արև: Այս տիպի կառույցները ցույց են տալիս որևէ բանի առկա լինելը: Լեզվաբանը անում է հետևյալ եզրակացությունը.«Եթե քերականորեն ասենք, կա միայն մի գլխավոր անդամ, որ և՛ ենթակա է, և՛ ստորոգյալ»¹:

Վ.Առաքելյանի ներկայացրած միակազմ նախադասությունների համակարգում նկատելի են հետևյալ իրողությունները. բայական միակազմ նախադասությունները անուղղակիորեն անվանում է անենթակա կամ ենթակա չունեցող, դիմավոր բայերով կազմվածներում գլխավոր անդամն անվանում է ստորոգյալ, անվանական նախադասություններում գլխավոր անդամը «համատեղում է» ենթակայի և ստորոգյալի պաշտոնները, անորոշ դերբայով կառույցները դնում է բայական դիմավոր ձևերի հետ, անդեմ է համարում միադիմի բայերով կազմված կառույցները, չնայած վերջիններս քերականորեն դիմավոր են: Որոշ դեպքերում կարելի է

¹ Նույն տեղում, էջ 42:

չհամաձայնել լեզվաբանի հետ, սակայն նրա դիտարկումների մեծ մասը ընդունվեց նաև հետազայում:

Առանձին ուսումնասիրություն է միակազմ նախադասություններին նվիրել Ս.Գյուլբուդադյանը («Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում», Երևան, 1967), որտեղ արտահայտված տեսակետները որոշ վերապահումներով ներկայացված են նաև 1988թ. լույս տեսած «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասագրքում: Նա ասում է, որ կան նախադասություններ, որոնք միակենտրոն են կամ միաբևեռ: Դրանց մի մասը ենթակայազուրկ է, ունի միայն դիմավոր բայով արտահայտված գերադաս անդամ, որին լեզվաբանն անվանում է ստորոգյալ, իսկ մի մասն էլ ոչ ենթակա ունի, ոչ ստորոգյալ, գլխավոր անդամն էլ արտահայտված է լինում գոյականով կամ անորոշ դերբայով: Հենց միաբևեռության հիմքով էլ Ս.Գյուլբուդադյանը այս տիպի նախադասությունները միավորում է մի տեսակի մեջ, որ կոչվում է միակազմ: Միակազմ նախադասությունները դասակարգելիս առաջին գրքում տարբերում է անենթակա, անդեմ՝ բայական և անվանական ենթատեսակներով, և բառ-նախադասություններ, իսկ երկրորդ գրքում՝ դիմավոր միակազմ և անդեմ միակազմ, որոնք լինում են բայական և անվանական:

Կարծում ենք՝ վերջին դասակարգումը Ս.Աբրահամյանի տեսակետի ազդեցության հետևանք է:

Հայերենի շարահյուսական համակարգի լավագույն հետազոտողներից է Ս.Աբրահամյանը, որը հանգամանորեն ներկայացրել է միակազմ նախադասությունների բնութագիրը: Նա միակազմ նախադասությունները հակադրում է երկկազմ նախադասություններին՝ ասելով, որ դրանք չունեն երկբևեռ (ենթակայի և ստորոգյալի) կառուցվածք ու «հատկանիշը և վերջինս կրող առարկան միակազմ նախադասության մեջ տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի և ստորոգյալի միջոցով»¹: Եվ չնայած դրան՝ նման նախադասությունները նույնպես ամփոփ միտք են արտահայտում: Ս.Աբրահամյանը այս կառույցները բաժանում է երկու ենթատեսակի՝ 1.անդեմ միակազմ նախադասություններ և 2.դիմավոր (կամ անենթակա) նախադասություններ: Ինչպես անվանումներն են ցույց տալիս, բաժանման

¹ Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Երևան, 2004, էջ 58:

հիմունքը քերականական դեմք ունենալու- չունենալու հատկանիշն է: Լեզվաբանը կիրառության տեսակետից շատ է կարևորում խոսքային իրավիճակը: Գործածվելու առումով դիմավորներն անդեմների համեմատ ավելի ինքնուրույն են: Ս.Աբրահամյանը նշում է, որ միակազմ նախադասություններն ունենում են մեկ գերադաս կամ գլխավոր անդամ՝ լրացումներով կամ առանց լրացումների, և այդ դեպքում որոշիչ դեր է խաղում, թե գլխավոր անդամը ինչ խոսքի մասով է արտահայտված:

Քննելով «անենթակա նախադասություններ» անվանումը՝ Ս.Աբրահամյանը իրավամբ կարծում է, որ այն տրվում է ի հակադրություն ենթակայով (= գեղջված ենթակայով) նախադասությունների, սակայն այդ նախադասությունների բնորոշ հատկանիշը պետք է որոշել անդեմ նախադասությունների հակադրությամբ, առավել ևս, որ անդեմ նախադասություններն էլ ըստ էության անենթակա են: Համադրելով նախադասությունները՝ նա գրում է. «Ուրեմն քննարկվող նախադասությունը (Անծրևում է:-Թ.Ա) անենթակա կամ դիմավոր միակազմ համարելու հարցը սոսկ տերմինի հարց չէ, այլ ամենից առաջ քերականական իրողության ճանաչման ու գնահատման հարց»¹: Այսպիսի դեպքերում կարելի է անել անվանումների ճշգրտումներ, չնայած լեզվաբանության մեջ այդպիսի փոփոխությունները խրախուսելի չեն:

Դիմավոր միակազմ նախադասությունները, ըստ իրենց դիմային իմաստների յուրահատկության, բաժանում է երեք տեսակի. ձևական դիմավոր՝ բայական և անվանական տարատեսակներով, անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր, իսկ անդեմ նախադասությունները՝ բայական և անվանական: Պետք է ասել, որ այսպիսի մոտեցումը ընդունված է շատերի կողմից: Օրինակ՝ Հր. Պետրոսյանը «Հայերենագիտական բառարանում» ներկայացնում է միակազմ նախադասությունների նույն սխեման:

Մ. Ասատրյանը² դիմավոր նախադասությունները գնահատում է ենթակայի առկայության հիմքով. ունեցողները երկկազմ են, իսկ չունեցողները (նաև չվերականգնվող)՝ միակազմ անենթակա և սրանց՝ դիմավոր բայով արտահայտված գերադաս անդամը անվանում է

¹ Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Երևան, 2004, էջ 62:

² Մանրամասն տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Երևան, 1983:

ստորոգյալ, որոնք ըստ արտահայտման լինում են բայական և անվանաբայական. Յրտեց// Յուրտ է: Միակազմ նախադասությունների մյուս խումբն անվանում է անդեմ՝ բայական և անվանական տեսակներով՝ ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության:

Նախադասությունների ձևավորման, կազմության յուրահատկությունների վերաբերյալ հարցերի լայն շրջանակ է քննում Ռ.Իշխանյանը՝ հաճախ ցուցաբերելով ինքնատիպ մոտեցում, լեզվական իրողություններին տալով ինքնատիպ բնորոշումներ: Հարցերը վերաբերում են ստորոգմանը, դասակարգմանը, գլխավոր անդամներին: Նա ընդունում է Ս.Աբրահամյանի դասակարգումը՝ դիմավոր և անդեմ, ընդ որում դիմավոր անվանումը ավելի ստույգ է համարում, քան անենթակա անվանումը, մյուս կողմից էլ դիմավոր բայը չի անվանում ստորոգյալ, այլ գլխավոր անդամ: Դիմավոր միակազմ նախադասությունների համակարգից Ռ. Իշխանյանը դուրս է թողնում Յուրտ է, Երեկո է, Տաք է տիպի նախադասությունները՝ դրանք համարելով երկկազմ նախադասություններ:

Այսպիսով, ներկայացրինք հայ շարահյուսագիտության մեջ միակազմ նախադասությունների վերաբերյալ արտահայտված հիմնական տեսակետները, որոնք հիմնականում կրկնվում են վերջին շրջանի ուսումնասիրություններում: Չխորանալով մանրամասների մեջ՝ կատարենք մի քանի դիտարկումներ:

1.Անկասկած քննարկվող կառույցները նախադասություններ են և ունեն հաղորդակցական որոշակի արժեք: Իբրև նախադասություններ՝ սրանք պետք է ունենան ստորոգում, որը, ինչպես գիտենք, ենթադրում է հատկանիշի վերագրում առարկայի, որը կատարվում է դիմավոր բայի (ստորոգյալի) միջոցով: Միակազմ նախադասությունների մի մասը ընդհարապես իրենց կազմում դիմավոր բայ չունեն, մյուս մասն էլ չնայած ունեն դիմավոր բայեր, սակայն վերջիններս ստորոգման գործառույթ չեն կարող իրականացնել, որովհետև բացակայում է համապատասխան քերականական ենթական: Ուրեմն ճիշտ կարելի է համարել լեզվաբանների այն տեսակետը, որ այս պարագայում կարևոր դեր է խաղում ավարտուն հնչերանգը: Բայց այս դեպքում էլ պետք է կարևորել մի հանգամանք՝ խոսքային իրավիճակը, որից դուրս հատկապես դիմավոր բայ չունեցողները կարող են պարզապես դիտվել որպես բառեր և

բառակապակցություններ: Սրանք ինքնուրույնության տեսակետից շատ են զիջում մյուս՝ դիմավոր բայ ունեցող կազմություններին:

2. Լեզվաբանների մի մասը դիմավոր կազմությունների գլխավոր անդամն անվանում է ստորոգյալ, մյուս մասը՝ գլխավոր անդամ: Կարծում ենք՝ ճիշտ է երկրորդ տեսակետը, քանի որ դիմավոր բայը՝ իբրև ստորոգյալ, չի իրականացնում ստորոգյալին բնորոշ գործառույթներ:

3. Ինչպես տեսանք, դիմավոր բայ գերադասով նախադասությունները կոչել են կամ անենթակա, կամ դիմավոր: Երևում է, որ անվանումների համար ընտրվել են տարբեր հիմունքներ, ընդ որում երկուսն էլ ճիշտ են արտացոլում քերականական իրողությունը: Սակայն եթե նկատի ունենանք հակադրության մյուս եզրը, որն ընդունված է անվանել անդեմ՝ դիմավոր բայ չունենալու պատճառով, ապա ճիշտ է այն մոտեցումը, որ տարբերակում են դիմավոր և անդեմ միակազմ նախադասություններ: Անենթակա անվանումը պատճառաբանված կարող է լինել միակազմ և երկկազմ նախադասությունների հակադրությամբ:

Այսպիսով, ելնելով արված դիտարկումներից՝ հնարավոր է ներկայացնել այլ դասակարգում՝ հիմք ընդունելով գերադաս անդամների խոսքիմասային պատկանելությունը. այն նախադասությունները, որոնց գերադաս անդամը բայ է, կարելի է անվանել բայական, իսկ գոյականով կամ այլ անուն խոսքի մասով արտահայտվածները՝ անվանական: Հասկանալի է, որ այս դեպքում պետք է կատարել նաև կառույցների վերադասավորում. դիմավոր և դերբայական կառույցները կկոչվեն բայական, իսկ բայազուրկ կառույցները՝ անվանական:

Բանալի բառեր՝ դիմավոր, անդեմ, միակազմ, երկկազմ, ստորոգյալ, անենթակա, գերադաս անդամ, շարահյուսություն, նախադասություն:

ON THE ISSUE OF CLASSIFICATION OF SINGLE COMPONENT SENTENCES

T. A. ASOYAN

Candidate of Philology, Associated Professor

The sentence is the minimal and basic communicative unit of the language, having a different structure. From this point of view, one of the peculiarities of the Armenian language is that there are two-component and single component sentence structures, conditioned by the presence or absence of the main

members. The article presents different views of scientists on the classification of single-component sentences in the scientific literature, then a new classification is proposed.

К ВОПРОСУ О КЛАССИФИКАЦИИ ОДНОСОСТАВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ

Т. А. АСОЯН

Кандидат филологических наук, доцент

Предложение – это минимальная и основная коммуникативная единица языка, имеющая различную структуру. С этой точки зрения, одна из особенностей армянского языка состоит в том, что различаются двусоставные и односоставные структуры, обусловленные наличием или отсутствием главных членов. В статье представлены различные взгляды ученых-синтаксистов по вопросу о классификации односоставных предложений в научной литературе, затем была предложена новая классификация.